



FAÇADE EXTÉRIEURE - COLLÈGE ARMÉNIEN - VENISE

ԱՐՏՈՒԹՅՈՒՆ - ՄԱՐԿԱՆԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ - ՎԵՆԵՑԻԱ

ՀԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7



NATIONAL ACADEMY OF SCIENCES, RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
HAIA-7

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК, РА
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

ТРУДЫ ИНСТИТУТА
АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
ХАИА-7

IAE PUBLICATION • ИЗДАТЕЛЬСТВО ИАЭ
YEREVAN 2025 ЕРЕВАН

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՒ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱԽԱ-7

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

**Տպագրվում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության
ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ**

**Published by decision of the Scientific Council
of the Institute of Archaeology and Ethnography, NAS of RA**

Խմբագրական խորհուրդ

Գլխավոր խմբագիր՝ Արսեն Բոբոկյան

Գլխավոր խմբագրի տեղակալ՝ Տորք Դալալյան

Խմբագրակազմ՝ Լևոն Աբրահամյան, Պավել Ավետիսյան,
Աստղիկ Բաբաջանյան, Ռուբեն Բադալյան, Միհրան Գալստյան,
Ջուսյոթ Թրափինա, Թեո վան Լինթ, Լորի Խաչատրյան, Ռուբեն Կարապետյան,
Թամար Հայրապետյան, Արսեն Հարությունյան, Սուրեն Հոբոսյան,
Դիանա Միրիջանյան, Ադամ Սմիթ, Պատրիկ Տոնասպետյան, Պիլոեր Քաուփ

Editorial Board

Editor-in-Chief: Arsen Bobokhyan

Vice-Editor-in-Chief: Tork Dalalyan

Editorial Stuff: Levon Abrahamian, Pavel Avetisyan, Astghik Babajanyan, Ruben Badalyan, Peter Cowe, Patrick Donabédian, Mihran Galstyan, Arsen Harutyunyan, Tamar Hayrapetyan, Suren Hobosyan, Ruben Karapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Diana Mirijanyan, Adam Smith, Giusto Traina

ՀԱԻԱ պարբերականի հերթական՝ 7-րդ հատորն ընդգրկում է ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի, Երևանի պետական համալսարանի, Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի, UCLA համալսարանի Ֆաուլերի թանգարանի (Լոս-Անջելես, Կալիֆորնիա) և Վիլյուսի Երոտական հումանիտար համալսարանի (Լիտվա) հետազոտողների հոդվածներն ու հաղորդումները, որոնց նախնական տարբերակները որպես զեկուցում ներկայացվել են ՀՀ ԿԳՄՄՆ Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի ֆինանսավորմամբ 2023թ. դեկտեմբերի 12-13-ին ՀԱԻ Սիյուտքի ուսումնասիրության բաժնի և Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի համատեղ կազմակերպած «Էթնոսոցիալական փոփոխությունները հայկական Սիյուտքում» գիտաժողովին: Հատորը եզրափակվում է Սիյուտքում հրատարակվող երկու պարբերականների վերջին համարների ընդարձակ գրախոսություններով և լրատուով:

ISSN 2953-805X

DOI:10.54503/2953-805X

© ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2025

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. ՀԵՏԱՉՈՏԱԿԱՆ ՀՈԴԿԱՃՆԵՐ

I. ՀՀ-ՍՓՅՈՒՌԹ, ՀՀ-ԱՐՏԵՐԿԻՐ. ՓՈԽԿԱՊԵՐ ԵՒ ՓՈԽԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ռուբեն Կարապետյան

Հայաստանի Հանրապետության հետ Սփյուռքի միգրացիոն կապերի մասին 8

Հրաժին Վարդանյան

Մարիամ Հակոբյան

Ինքնության քաղաքականությունը՝ որպես պետություն-սփյուռք գործակցության բաղադրիչ (ՀՀ – Սփյուռք հարաբերությունների պարագան) 21

Հրայր Ճէպէճեան

Մերձատր Արևելքի հայ համայնքներ և ՀՀ յարաբերություններ. արդի միտումներ, մարտահրավերներ և հնարաւորութիւններ 34

Գայանե Հակոբյան

Նոր միգրանտների սոցիալ-մշակութային կյանքը Սփյուռքում. հայաստանցի հարազատների դիտանկյունը 48

Սոնա Ներսիսյան

Ռուսաստանցի և հնդկաստանցի ներգաղթյալների ինտեգրման փորձառությունը Հայաստանում 59

II. ԱՐԵՒԵԼՅԱՆ ԵՐՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔՆԵՐ

Սյրեխան Զախարյան

Արևելյան Եւրոպայի հայ համայնքների հիշողության մշակույթը և դրա վրա պատմական քաղաքականության ու ազգային ծրագրերի ազդեցությունը արդի փուլում 72

Սվետլանա Պողոսյան

Վառնայի հայ համայնքի սոցիալ-մշակութային առանձնահատկությունները. իրավիճակ, միտումներ և զարգացումներ 89

Գոռ Մարտիրոսյան

Լեհաստանում հայ ներգաղթյալների տնտեսական գործունեության տեսակները, այդ գործունեության դիվերսիֆիկացիայի և փոփոխության արդյունքները 103

Լուսինե Տանայան

Սյուզաննա Բարսեղյան

Հայերը Չեխիայում. համայնքային կյանքի յուրահատկություններ 113

III. ԱՄՆ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔ

Միհրան Գալստյան

«Հայրենադարձություն» եզրույթը Սփյուռքի արդի գործընթացների համատեքստում. Լոս-Անջելեսի հայ համայնքի օրինակը 126

Վերժինե Սվազյան

Ամերիկահայոց հայապահպանման մակարդակը՝ ըստ բանավոր
մշակույթի գրառված նյութերի 139

IV. ՏԵՍԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ***Նելլի Խաչատրյան******Մարիամ Հարությունյան***

Կրոնատաժության փոխանցումն ընտանիքում. տեսական խնդիրներ 156

Ռուբեն Օհանջանյան

Սոցիալական հեռավորության չափման՝ Բոգարդուսի սանդղակի
կիրառման յուրահատկությունները 167

Բ. ՉԱՆԱՉԱՆՔ**V. ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ*****Կարեն Ասատրյան***

Պոլսահայ կրթական համակարգի վկայագրեր և վիճակացույցներ
(19-րդ դարավերջ – 20-րդ դարասկիզբ) 176

Սալվինե Մարկոսյան

«Հայաստան» շաբաթաթերթի դերը պոլսահայ մշակութային կյանքում 183

VI. ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ***Կասիա Արմենյան***

Լույսով մնաք. Հայրենիքի և Սփյուռքի տեսականները 188

VII. ԳՐԱԽՈՍԱԿԱՆ***Տորք Դալայան******Լուսինե Հայրիյան******Անահիտ Խեչոյան***

Études arméniennes contemporaines, 2023, №15.

Ֆրանսիայի հայալեզու մամուլը և անդրազգային տարածույթի ստեղծումը 200

Անդրանիկ Տազևսեան

Հայկազեան հայագիտական հանդէսի 43-րդ և 44-րդ հատորներուն չորս գիրքերը 204

VIII. ԼՐԱՏՈՒ***Միզան Բոնպեան***

Հայագիտական ամստոնային խտացեալ դասընթացքին 40-րդ տարին.

Վենետիկի մեջ՝ հայկական աշխարհ 218

ԼՈՒՍԱՆԿԱՐՆԵՐ

221

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

230

I

ՀՀ–ՍՓՅՈՒՌ, ՀՀ–ԱՐՏԵՐԿԻՐ.
ՓՈԽԿԱՊԵՐ ԵՒ ՓՈԽԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սոնա Ներսիսյան, պ.գ.թ.
ՀԱԻ

ՌՈՒՍԱՍՏԱՆՑԻ ԵՒ ՀՆԴԿԱՍՏԱՆՑԻ ՆԵՐԳԱՂԹՅԱԼՆԵՐԻ ԻՆՏԵԳՐԱԿ ՓՈՐՁԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ՝

Վերջին տարիներին ՀՀ-ում դիտվում է աննախադեպ խոշոր խմբերով այլազգի ներգաղթյալների հոսք ՌԴ-ից, Հնդկաստանից, Ուկրաինայից, Բելառուսից, ինչպես նաև Լիբանանից և այլ երկրներից: Կարևոր է հետևել, թե ինչպես են ներգաղթյալները հաղթահարում առաջնային հարմարման փուլը, ինչպես են *ինսերգրում*¹ հայ հանրությանը, որոնք են այս գործընթացի ուսումնասիրման ընթացքում շեշտադրվելիք հիմնական հարցերը: Սույն հոդվածում փորձ է արվում հասկանալու ՀՀ-ում ներգաղթյալների *ինսերգրման* փորձառությունը, դրա իրավական ու մշակութային նախադրյալները, ինչպես նաև նրանց տեղաբաշխման հարցերը, մասնավորապես՝ վերլուծել առավել խոշոր խումբ կազմող ռուսաստանցիների և հնդկաստանցիների օրինակները:

Հետազոտությունն իրականացվել է փաստաթղթերի վերլուծության և կիսաձևայնացված հարցազրույցի մեթոդների կիրառմամբ: Ընտրանքի ձևավորման ժամանակ կիրառվել է քվոտային մեթոդը: Հարցազրույցներն արվել են ՀՀ-ում՝ 2021–2023 թթ., իրականացվել է շուրջ 85 հարցազրույց (N^o 1–85)²:

*Հիմնաբառեր*³՝ ներգաղթ, այլազգի ներգաղթյալ, ինտեգրում, տեղաբաշխում, սոցիալ-մշակութային կյանք:

Ներածություն

Տարբեր ժամանակներում ներգաղթյալների հոսքի մեջ բարդ է տարբերակել հայ կամ այլազգի լինելու հանգամանքը, քանի որ վիճակագրությունն իրականացվել է միայն քաղաքացիության հիման վրա: Սակայն այս հոդվածի շրջանակում ընդգծվում է ուսումնասիրվող խմբի ազգային պատկանելության բնութագրիչը:

Տեղափոխության արդյունքում մի շարք հարցեր են ծագում թե՛ ներգաղթյալների և թե՛ ընդունող հանրության շրջանում: Որպես կանոն, այլազգի ներգաղթյալները *ինսերգրման* փուլում բախվում են մի շարք խնդիրների.

¹ Հետազոտությունն իրականացվել է ՀՀ ԿԳՄՄՆ ԲԿԳԿ 22YR-6A037 ծածկագրով «Այլազգի ներգաղթյալների սոցիալական ինտեգրման փորձառությունը Հայաստանում. իրավիճակ և զարգացումներ» գիտական նախագծի շրջանակում: Որպես թիրախային խումբ ընտրվել են 2019–2023 թթ. ՀՀ տեղափոխված ռուսաստանցի և հնդկաստանցի ներգաղթյալների խմբերը:

² Հարցազրույցները վարել են պ.գ.թ. Լ. Տանջյանը և պ.գ.թ. Ս. Ներսիսյանը: Պահպանվել է տեղեկատու անձանց ներկայացվածություն՝ սեռատարիքային, ծագման և տեղաբաշխման բնակավայրի, զբաղվածության ցուցանիշներով:

1) իրավական. ՀՀ սահմանադրական կարգի, պետաիրավական, քաղաքական համակարգի, մարդու և, մասնավորապես, ներգաղթյալների իրավունքների ու պարտականությունների վերաբերյալ անտեղյակություն ու դրանից բխող մի շարք խնդիրներ,

2) մշակութային. հայաստանյան հանրության մեջ ընդունված արժեքների, սովորույթների և վարքագծի կանոնների վերաբերյալ անտեղյակություն ու դրանից բխող մի շարք խնդիրներ,

3) սոցիալ-տնտեսական. երկրում առկա և իրենց համար հասանելի զբաղվածության, օժանդակության, կրթական, առողջապահական, սոցիալական ծրագրերի վերաբերյալ անտեղյակություն ու դրանից բխող մի շարք խնդիրներ,

4) տեղաբաշխում. ՀՀ-ում ներգաղթյալների տեղավորման հետ կապված խնդիրներ և դրանց սոցիալական հետևանքներ:

Միջավայրային ազդեցության տեսանկյունից կարևոր է, թե ներգաղթյալները որտեղ են տեղավորվում, որ համայնքներում, բնակավայրերի հատկապես որ հատվածներում, արդյոք վարում են հոծ, թե ցրիվ կենսագործունեություն, համախմբում են արդյոք իրենց *ռեսուրսները*, կարողանում են հաղորդակցվել տեղացիների հետ, ևն:

Հայաստանում երբեք չի կատարվել օտարերկրյա քաղաքացիների *ինտեգրման* կարիքների քաղաքականության բացերի համապարփակ գնահատում: Այս առումով կարևոր է հասկանալ նրանց ներգաղթի, հարմարման, *ինտեգրման մեխանիզմները*, բացահայտել խնդիրները: Իրականում ՀՀ-ը կարողացել է *ինտեգրել* ներգաղթյալների փոքր հատվածին միայն, ինչը հուշում է, որ նրանց *ինտեգրման մեխանիզմները* բավարար արդյունավետ չեն գործել:


Ընդհանուր պատկեր

2022թ. սկսված ռուս-ուկրաինական պատերազմի արդյունքում տասնյակ հազարավոր ռուս, ուկրաինացի, բելառուս, նաև հայազգի ներգաղթյալներ տեղափոխվեցին ՀՀ: Այսպես, 2022-ի առաջին կեսին միայն՝ ավելի քան 40.000 ներգաղթյալ է եկել ՌԴ-ից³ [իմմտ. գծ. 1]: Նրանց ազգային կազմը հիմնականում ներառել է ռուսներ, ուկրաինացիներ, բելառուսներ, հրեաներ ևն, որոնք Հայաստան են եկել աշխատելու, ապրելու նպատակով՝ շատ դեպքերում տեղափոխելով իրենց ֆինանսական միջոցները, ունեցած *կապիտալը*:


Վերջին տարիներին, սակայն, ՀՀ մուտք գործող ներգաղթյալների հոսքերը չեն սահմանափակվել միայն զանգվածային հարկադիր տեղահանվածներով: Նրանց զուգահեռ, 2010-ից սկսած՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կացության մշտական, ժամանակավոր կամ հատուկ կարգավիճակ է ստացել աշխարհի 128 երկրից ժամանած ավելի քան 34 հազար օտարերկրացի⁴:

³ Հարությունյան Ս., Այս տարվա առաջին կիսամյակում Հայաստանում հաստատվել են մոտ 40 հազար ռուսաստանցիներ // Ազատություն, 2022 (օգոստոսի 3) <https://www.azatutyun.am/a/31972168.html>, (դիտումը՝ 15.10. 2023):

⁴ ՀՀ կառավարության նիստի արձանագրությունից քաղվածք (21.06.2016) <http://www.irtek.am/views/act.aspx?aid=86028> (դիտումը՝ 10.10. 2023):



Գծապարկեր 1. Օգտերերկրացիների կողմից ՀՀ սահմանահատումների պարկերը 2015–2022թթ. (քաղաքական թվերով)




Գծապարկեր 2. ՀՀ-ում կացության որևէ կարգավիճակի իրավունք ստացած օգտերերկրյա քաղաքացիների թվի դինամիկան 2015–2019թթ. (քաղաքական թվերով)

Աղյուսակ 1.
ՀՀ-ում կացության կարգավիճակ ստացած օգտերերկրացիների թիվը 2022թ. ըստ կացության կարգավիճակների (քաղաքական թվերով)

քաղաքացիության երկիրը	ժամանակավոր	մշտական
ՌԴ	6665	1897
Հնդկաստան	2182	30
Իրան	1353	254
Ուկրաինա	201	184
Վրաստան	163	209
Լիբանան	157	138
Սիրիա	128	101
Բելառուս	186	38
Հորդանան	189	10
ԱՄՆ	94	87
Չինաստան	177	2
Ղազախստան	85	45
Շրի Լանկա	123	–
Ֆիլիպիններ	95	9
Իրաք	84	10
քաղաքացիություն չունեցող	6	5
այլ երկրներ	990	260

ՀՀ-ում օրինական բնակություն հաստատելու համար ներգաղթյալները կարող են դիմել կացության երեք կարգավիճակներից որևէ մեկը ստանալու համար՝ ժամանակավոր, մշտական կամ հատուկ: Հետևելով մինչպատերազմական և մինչհամաճարակային վիճակագրությանը՝ կարող ենք արձանագրել օրինաչափ *դինամիկան* համեմատաբար կայուն պայմաններում [գծ. 2]: 2019-ի ընթացքում 7986 օտարերկրյա քաղաքացու տրվել է Հայաստանում որևէ կարգավիճակի կացության իրավունք (2018-ին՝ 8330, 2017-ին՝ 6042, 2016-ին՝ 5949 և 2015-ին՝ 5722): Այստեղ կարող ենք տեսնել տարեցտարի աճող դրական *դինամիկա*:

ՀՀ-ում կացության այս կամ այն կարգավիճակ ստացող օտարերկրյա քաղաքացիների մեջ գերակշռում են ՌԴ, Հնդկաստանի, Իրանի քաղաքացիները [աղ. 1]: Կենտրոնանալով ՌԴ-ից և Հնդկաստանից ներգաղթած քաղաքացիների տվյալների վրա՝ նկատում ենք, որ հսկայական խզում կա ժամանակավոր ու մշտական կացություն ստացածների միջև [գծ. 3]: Սա անմիջականորեն կապված է նրանց ներգաղթի պատճառների ու պայմանների հետ:



Գծապատկեր 3. ՀՀ-ում կացության կարգավիճակ ստացած՝ ՌԴ և Հնդկաստանի քաղաքացիների հարաբերակցությունն՝ ըստ կացության կարգավիճակների (2022 թ.)

ՀՀ-ում ալյազգիների ինտեգրման իրավական նախադրյալները

Բնակչության *միգրացիան* ՀՀ-ում կարգավորվում է *միգրացիոն* ռազմավարության ծրագրով, որ հիմնված է ներգաղթյալների և փախստականների իրավունքների միջազգային հաստատված սկզբունքների և չափանիշների վրա: ՀՀ *միգրացիոն* քաղաքականության հիմնական նպատակն է՝ բարելավել օրինական *միգրացիայի* գործընթացը՝ պարզեցնելով ՀՀ մուտքի *ռեժիմները*, հստակեցնելով կացության կարգավիճակի տրամադրման գործընթացները, կարգավորելով օտարերկրացիների աշխատանքային պայմանները ՀՀ-ում և աջակցելով կրթության միջազգայնացմանը:

Համաձայն «Օտարերկրյա քաղաքացիների մասին» ՀՀ օրենքի՝ օտարերկրացիները մուտք են գործում ՀՀ պետական սահմանի անցման կետերով, և նրանց համար սահմանվում են կացության հետևյալ կարգավիճակները.

ա) ժամանակավոր. տրվում է յուրաքանչյուր օտարերկրացու, եթե նա հիմնավորում է, որ գոյություն ունեն ՀՀ տարածքում մեկ տարի և ավելի ժամկետով իր բնակվելը հիմնավորող հանգամանքներ:

բ) մշտական. եթե օտարերկրացին ապացուցում է ՀՀ-ում ՀՀ քաղաքացի հանդիսացող կամ հատուկ կացության կարգավիճակ ունեցող ամուսնու կամ մերձավոր ազգականի (ծնող, զավակ, եղբայր, քույր, տատ, պապ, թոռ) առկայու-

թյունը, ՀՀ-ում ապահովված է բնակարանով ու գոյության միջոցներով և մինչև մշտական կացության կարգավիճակ ստանալու համար դիմում ներկայացնելն օրենքով սահմանված կարգով առնվազն 3 տարի բնակվել է ՀՀ-ում կամ ազգությամբ հայ է կամ ՀՀ-ում իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն:

գ) հատուկ. տրվում է ազգությամբ հայ օտարերկրացիներին, նաև ՀՀ-ում տնտեսական կամ մշակութային գործունեություն ծավալող այլ օտարերկրացիների (հոդ. 14)⁵:

ՀՀ-ում օտարերկրացիների կրթության, առողջապահության և աշխատանքի պայմաններն իրավական տեսանկյունից հավասար են բոլոր երկրների քաղաքացիների համար ու սահմանվում են միևնույն սկզբունքով: Օտարերկրացիներն իրավունք ունեն ազատորեն տնօրինելու իրենց աշխատանքային ունակությունները, ընտրելու մասնագիտության և գործունեության տեսակը, զբաղվելու ՀՀ օրենսդրությամբ չարգելված տնտեսական գործունեությամբ՝ պահպանելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները: Երաշխավորվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված աշխատանքային հարաբերությունների կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ անկախ նրանց սեռից, ռասայից, ազգությունից, լեզվից, քաղաքացիությունից և աշխատողի գործնական հատկանիշների հետ չկապված այլ հանգամանքներից (հոդ. 22)⁶:

Սակայն սոցիալական միջավայրն ու մշակույթը առավել հարմար են ռուսների, քան հնդիկների համար: Ռուսաստանցիների *ինստեգրման* հարցում հսկայական դրական դեր ունի հայ հանրության մեջ ռուսերենի իմացության տարածվածությունը, ընդհանուր ետխորհրդային մշակույթի գոյությունը և, հետևաբար, հանդուրժող տրամադրվածությունը:

Ավելի նպաստավոր է իրավիճակը ՏՏ ոլորտի ներկայացուցիչների համար, ինչը վերաբերել է հատկապես 2022-ի փետրվարից տեղափոխվածներին: Նրանց զանգվածային ներգաղթը զուգահեռվել է առանձին կազմակերպությունների տեղափոխմամբ կամ դրանց մասնաճյուղերի հիմնումով և աշխատակազմի ֆիզիկական տեղափոխությամբ: Հատկապես ՏՏ կազմակերպություններն օգտվել են ՀՀ-ում ոլորտային արտոնություններից, քանի որ սա թիրախային ուղղություն է պետության համար: Արդյունքում կրկնակի դյուրացել է ոլորտի աշխատակիցների ներառումն ու հարմարումը հայկական միջավայրում:

Հնդկաստանցի ներգաղթյալների պարագայում առավել տարածված է ցածր որակավորում պահանջող աշխատանքային հատվածում ներգրավվելու խնդիրը: Այն ներկայումս իրականանում է առավել կազմակերպված կերպով, քան նախկինում էր, ինչի արդյունքում կարելի է նկատել հարմարման գործընթացի դյուրացում:

Հնդկաստանցի ներգաղթյալներ

Ներգաղթի հոսքերի մի տեսակ է աշխատանքային ներգաղթը, որն ակտիվացավ հատկապես 2017 թ. ՀՀ Կառավարության ընդունած երկու որոշումնե-

⁵ ՀՀ օրենքը օտարերկրացիների մասին ընդունված է 2006 թ. դեկտեմբերի 25-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=73272> (դիտումը՝ 27.10. 2023):

⁶ ՀՀ օրենքը օտարերկրացիների մասին ընդունված է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=73272> (դիտումը՝ 27.10. 2023):

րից հետո, որոնցով դյուրացվում էր Հնդկաստանի քաղաքացիներին մուտքի վիզայի տրամադրումը: Ըստ պաշտոնական վիճակագրության՝ 2018թ. ՀՀ մուտք է գործել 31.213 Հնդկաստանի քաղաքացի, իսկ ՀՀ-ից մեկնել է 27.490-ը: 2019թ. ՀՀ մուտք է գործել 38.735 Հնդկաստանի քաղաքացի և մեկնել է 39.181-ը, այսինքն՝ 446 անձ ավելին է մեկնել, քան եկել ՀՀ: Ժամանակավոր կացության կարգավիճակ ունեցող 5000 անձանցից 1562-ը եղել են Հնդկաստանի քաղաքացիներ, որոնցից 1325-ն ուսանողներ են: Իսկ մնացած՝ ավելի խոշոր հատվածը ՀՀ ներգաղթի նպատակ է ներկայացրել աշխատելու ցանկությունը: Կազմակերպված տեղափոխության պարագայում ներգաղթյալները դեռևս ծագման երկրից սկսած պատրաստ են լինում ՀՀ-ում առաջարկվող աշխատանքային պայմաններին:

Օտարերկրացիները, այդ թվում Հնդկաստանի քաղաքացիները, ՀՀ-ում աշխատելու համար պետք է ունենան աշխատանքի թույլտվություն, որի համար գործատուն դիմում է Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալությանը: Դիմելուց հետո գործակալությունը փորձում է ներկայացված թափուր աշխատատեղը համալրել նախ ՀՀ քաղաքացի գործազուրկների միջոցով և միայն համապատասխան աշխատող չգտնելու դեպքում տալիս է թույլտվություն՝ տվյալ աշխատանքի համար օտարերկրյա քաղաքացի վերցնելու:

Ուսումնասիրության տեսակետից՝ ՀՀ տեղափոխված հնդկաստանցի ներգաղթյալները, թերևս, ամենաբարդ խումբն են կազմում, որովհետև բազմազան են թե՛ ներգաղթի պատճառներով ու բնույթով, թե՛ էթնիկ, լեզվական, կրոնական պատկանելությամբ: Բացի այդ, նրանք որպես հանրային վարում են փակ կենսակերպ:

Այս խմբում ուրվագծվում են մի քանի հստակ շերտեր, որոնք միմյանց հետ կապեր չեն պահպանում, սակայն յուրաքանչյուր հատվածի ներսում սերտ փոխառնչություններ կան⁷:

Մի հատված է կազմում ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվողների խումբը. այն, օրինակ, մատուցման ոլորտում զբաղվում է ռեստորանային ձեռնարկատիրությամբ (հնդկական ուղղվածության) կամ Հնդկաստանից Հայաստան համեմունքների առևտրով: Իրադարձային դրվագներ կան, երբ ծագումով հնդիկ ներգաղթյալներն իրենց ձեռնարկությունները ծառայեցնում են սոցիալական-բարեգործական նպատակների: Նման օրինակները ցայտուն ցույց են տալիս այս խմբի թիրախավորած տեղը/դիրքը հանրության կառուցվածքում *ինսերգրման* համար՝ սոցիալական որոշակի հարցերին արձագանքելու կամ մասնակցելու պատրաստականությամբ ու նախաձեռնությամբ:

Հարկ է նշել, որ այս խումբը ևս իրեն առանձնացնում է մնացյալ խմբերից: Օրինակ, մեր տեղեկատու անձանցից մեկի խոսքով՝ *«Ես Հիմալայների լեռանից եմ, այդ պարճառով չեմ շփվում «սևերի» հետ: Միգրացի ձեռք համար*

⁷ Այսպես, հնդիկ ներգաղթյալները տևական ժամանակ, դեռևս հորհրդային Հայաստանի ժամանակաշրջանից հայտնի են եղել որպես ուսանող, ընդ որում՝ հստակ բժշկական ուղղվածության: Սրա պատճառները իրենք՝ հնդիկները բացատրում էին ՀՀ-ում հասանելի բարձր որակի բժշկական կրթությամբ (մինչև օրս չի փոփոխվել ՀՀ-ում ուսանող հնդիկների շարժառիթը): Այս խումբն իրեն առանձնացնում է մնացյալ խմբերից:

մենք նույնն ենք, բայց, հավատացեք, մենք շատ փառքեր ենք: Ես ու իմ ընտանիքն այնքան համարվում են քարձր խավի մարդիկ, չեմ ուզում ասել, թե մյուսները ցածր խավից են, բայց ես այնքան էլ նրանց հեռու չեմ շփվի: Բացի այդ, մեր կրոնն էլ է փառքեր: Այնպես որ, հա՛, մենք շատ փառքեր ենք»⁸:

Ըստ այլ հարցազրույցի՝ «Գիրքեք, մեզ մոտ շատ խառը մարդիկ են ապրում, նկատի ունեմ խառը ազգությամբ, կրոնով, լեզվով են: Հայաստանի նման չէ: Չսայած դուք էլ եք հաշտագնում փառքերություններ դնել փառքեր մարզերի մարդկանց միջև, երևի դա բնական մի բան է: Բայց դուք իրականում նույնն եք, իսկ մեզ միավորում է միայն նույն երկրից լինելը: Ես այսպես շփվում եմ միայն հարակ նպատակներով եկած մարդկանց հետ ու ընկերություն եմ կարողանում անել հաշված թվով մարդկանց հետ: Կարծում էի՝ որքան շատ մարդ գա այսպես, այնքան ավելի մեծ ընտրություն կունենամ շփվելու համար, սակայն այդպես չեղավ. շատ խառը մարդիկ եկան, ում հետ ընդհանուր բան համարյա չունեմ: Ես նույնիսկ չեմ հասկանում նրանց լեզուն: Տեսեք, ես Ձեզ հետ հայերեն եմ խոսում (չնայած, հասարակ ինչ-որ բաներ ճիշդ չեմ արտասանում), բայց ես ուզեցի ու կարողացա սովորել ձեր լեզուն, իսկ իրենցը՝ ոչ, որովհետև ինձ պետք չէ»⁹:

Այս խմբի ներկայացուցիչների ճշող մեծամասնությունը տեղավորված է Երևանում: Ուսանողներից շատերն օգտվում են ուսանողական հանրակացարաններից, իսկ մնացած հատվածը նախընտրում է համատեղ բնակարան վարձակալել:

Հնդիկ ներգաղթյալների մեկ այլ խումբ են կազմում ցածր որակավորում պահանջող կամ որևէ որակավորում չպահանջող աշխատանքի նպատակով ՀՀ տեղափոխվածները: Հատկանշական է նրանց ներգաղթի համեմատաբար կազմակերպված ձևը: Այստեղ հանդիպում ենք շղթայական գաղթի երևույթին, ինչը պարզ է դարձնում ակտիվ կապը *սուրենցիալ* ներգաղթյալների հետ, ինչպես նաև մատնանշում ներգաղթի հստակեցված *մեխանիզմ*: Այս ուղղությամբ նկատելի է մի քանի աշխատանքային գործակալությունների ակտիվ գործունեությունը, որոնք համագործակցում են Հնդկաստանի գործակալությունների հետ: Դրանք հավաքագրում և ուղղորդում են հնդիկ ներգաղթյալներին՝ ՀՀ մեկնելու ու աշխատելու համար: Հիմնականում նրանք ներգաղթում են ընկերների, ազգականների կամ թեկուզ հեռակա ծանոթների խմբերի հետ և ՀՀ-ում, որպես կանոն, տեղավորվում են միասին նույն բնակավայրում, հաճախ նույն տանիքի տակ: Հետաքրքիր է, որ հաճախ գործատուն ինքն է հոգում ներգաղթյալ աշխատակիցների տեղավորման հարցը, ինչի արդյունքում կարելի է նկատել հնդիկ աշխատանքային ներգաղթյալների *դիսկրեթ* տեղակայում ՀՀ ողջ տարածքում: Ստացվում է՝ նրանք ցրվա բնակվում են ՀՀ տարբեր մարզերում, սակայն միևնույն բնակավայրի մեջ բավական հոծ են տեղավորված: Այս հանգամանքը, ինչպես նաև տեղի մշակույթի, լեզվի, դավանանքի տարբերությունները հարկադրում են նրանց սոցիալապես մեկուսանալու ողջ հանրությունից և «պարկուճավորվելու»՝ ինքնաներփակվելու:

⁸ Երևան, 2023 թ., հունիս, հարցազրույց № 25:

⁹ Երևան, 2023 թ., հունիս, հարցազրույց № 30:

Այս երևույթը, սակայն, բնութագրական է հնդիկ ներգաղթյալների մյուս հատվածների համար ևս:

Ռուսաստանցի ներգաղթյալներ

Հայ հանրությունը սովոր է ռուսներին տեսնելու զբոսաշրջիկի կարգավիճակում, սակայն վերջին խոշոր հոսքերը զբոսաշրջային չեն եղել, թեև որոշ կայուն ներգաղթյալներ ներկայանում են որպես այդպիսին: Վերջին տարիներին ռուսաստանցի ներգաղթյալների հոսքը ՀՀ իր քանակով աննախադեպ է. միայն մշտական կացության կարգավիճակ ունեցող 7482 անձանցից 3680-ը եղել են ՌԴ քաղաքացիներ:

Այս աճն ազդում է ՀՀ հանրության վերաբերմունքի վրա. մասամբ դժգոհություն է առաջանում, քանի որ հայ հանրությունը լայնածավալ «այլազգի, այլ մշակույթի» ուղղակի ներհոսքն ընդունելու փորձ չունի, իսկ ռուսական մշակույթը որքան էլ հասկանալի է, սակայն մնում է «օտար»: Մյուս կողմից, ՌԴ ներգաղթյալների մեծածավալ ներդրումները և (կամ) ուղղակի կարճաժամկետ և միջնաժամկետ ծախսերի շրջանառությունը դրական ազդեցություն են ունենում ՀՀ տնտեսության վրա:

Պատկերն ու գնահատականները տարբեր են տնտեսական գործունեության տարբեր առումներով: Օրինակ՝ անշարժ գույքի գների սրընթաց աճը դրական է ազդում ՀՀ հանրության ֆինանսական վիճակի վրա, բայց առաջացնում է ռուսաստանցիների հանդեպ բացասական վերաբերմունք, իսկ ՏՏ ոլորտի զարգացումները դրական են ազդում երկու կողմի վերաբերմունքի վրա: Այնուամենայնիվ, տնտեսությունը բազմազործոն է և փոխկապակցված, և վերաբերմունքը գնահատելիս հնարավոր չէ հույս դնել միայն մեկ ոլորտի *խնդիր* վրա: Հետևաբար, ավելի բազմազան և հեռահար ապագայի վերաբերմունքի հետևանքները հասկանալու համար պետք է հաշվի առնել նաև դրամական, սպառողական, ներդրումային և այլ ոլորտների փոփոխությունները¹⁰:

Ժամանելով ՀՀ՝ ՌԴ ներգաղթյալներն իրենց ֆինանսական սահմանափակման հարցը կարողացան լուծել հենց օդանավակայանում. հնարավոր եղավ իրականացնել փոխանցումներ, արժույթի փոխանակում MIR քարտով կամ ռուսական հաշիվներ՝ օդանավակայանում տեղակայված բանկերի կամ ֆինանսական խորհրդատուների միջոցով: Նրանք կարողացան 1–2 օրվա ընթացքում ստանալ հայկական գրանցում, այնուհետ մեկնել երրորդ երկիր կամ նույնիսկ վերադառնալ ՌԴ՝ շարունակելու կամ ավարտին հասցնելու իրենց աշխատանքը: Այս խմբին պայմանականորեն կարելի է անվանել «սուպեր տրանզիտ», քանի որ նրանց չի հաջողվում որևէ սոցիալ-մշակութային ենթատեքստ ունենալ:

ՌԴ ներգաղթյալների ճնշող մեծամասնությունը ՀՀ է տեղափոխվել միայնակ՝ առանց ընտանիք: Նրանք հիմնականում բնակվում են Երևանում՝ ինչպես քաղաքի կենտրոնում, այնպես էլ ծայրամասերում, մեծ հոսք է եղել նաև

¹⁰ Abrahamyan 2023; Poghosyan 2023;
Russia-Ukraine War: 2022 Witnesses a Fourfold Growth in Money Transfers from Russia to Armenia // Ampop Media, 2022 (April 26) <https://ampop.am/en/how-the-wholesale-electricity-market-works-in-armenia/> (ղիտումը՝ 22.05. 2023):

դեպի Գյումրի, Վանաձոր, Դիլիջան քաղաքներ: Որոշ տարօրինակ դեպքեր կան, երբ ՌԴ ներգաղթյալները բնակություն են հաստատել տարածաշրջանային փոքր քաղաքներում կամ գյուղերում:

Բարեկեցության մակարդակը տատանվում է՝ կախված հոսքերի ժամկետներից: Տնտեսական առումով՝ ռուսաստանցիները զգալի ակտիվություն են ցուցաբերել հատկապես ձեռներեցության և ՏՏ ոլորտներում: Սոցիալապես ՌԴ ներգաղթյալները կարողանում են գոնե իրենց նվազագույն բարեկեցությունն ապահովել: Հարկ է ընդգծել, որ ՀՀ-ում գործազուրկ ռուսներ գրեթե չկան, քանի որ նրանք բոլորն ունեն աշխատանքային պայմանագիր կամ ինչ-որ վճարովի աշխատանք են կատարում այստեղ կամ արտերկրում:

Ռուսաստանցիների ակտիվությունը քաղաքական և քաղաքացիական ուղղությամբ աստիճանաբար մարեց՝ մոտելով ավելի լատենտային փուլ, որում նրանք իրենց ավելի հարմարավետ են զգում: Սակայն գտնվելով այստեղ՝ ռուսաստանցիները շարունակում են հետաքրքրվել ՌԴ-ով, այնտեղ տեղի ունեցող իրադարձություններով: Հանրային խոսույթն անընդհատ փոխվում է՝ կախված այն իրադարձություններից, որոնք պարբերաբար գերիշխում են:

Ունենալով համատեղ անցյալ՝ ետխորհրդային երկրներից տեղափոխված այլազգի ներգաղթյալները որոշակի ապահովություն են տեսնում հայաստանյան հանրային միջավայրում: Թեև ներգաղթի բոլոր ալիքներով եկածներն իրենց ներկայացնում են որպես ոչ-կրոնական մարդիկ, այդուհանդերձ նրանց ճշող մեծամասնությունը քրիստոնեություն է դավանում, իսկ լեզուն հասկանալի է տեղացիների հետ շփման համար: *Ինտեգրման* տեսանկյունից այս խումբն ունի որոշակի առավելություններ՝ ի տարբերություն հնդկաստանցի խմբերի, որոնք տարբերվում են իրենց լեզվական, կրոնական վարքով:

“For the first few months I felt like a tourist on vacation. Then at the beginning of this year and for a few more months, maybe six months, I felt like I was this emigrant and so on. And now this concept and boundaries have somehow blurred. It's as if I stopped identifying myself with some group. I am Russian by nationality, living abroad. ... it is possible that when everything is over, we can return. We admit this possibility, we do not burn bridges”¹¹.

Հատկանշական է, որ ռուսաստանցիներն իրենց ներգաղթի ու *ինտեգրման* փորձառությունից խոսելիս՝ կենտրոնանում են իրենց տեղափոխության փորձի վրա՝ շեշտադրելով խնդրի անհատականացումը: Չնայած նրանց գերակշիռ մասը տեղափոխվել է միայնակ, սակայն մուտքի վայրում՝ հայ հանրության մեջ ազգային կամ քաղաքացիության պատկանելության հիմքով խմբայնացում չի նկատվում: Կարելի է տեսնել որոշ առանձին խնդիրների շուրջ համախմբում, սակայն դրանք խիստ փոքրաթիվ են, սակավ ու իրավիճակային:

Այս պարազայում նրանք սահմաններ են գծում ոչ թե առանձին խմբերի միջև, այլ տեղացի հանրության հետ: Նրանք շարունակում են պատկանելություն փնտրել իրենց ելքի երկրի հանրության հետ և հետևելով ՌԴ իրավիճակին՝ փորձում են վերակառուցակցել ինքնությունը, վերագնահատել ՌԴ դերը

¹¹ Երևան, 2023 թ., հունիս, հարցազրույց № 18:

իրենց կարգավիճակի հարցում: Արդյունքում՝ ֆիզիկապես գտնվելով ՀՀ-ում և կազմակերպելով իրենց ժամանակավոր կամ մշտական կյանքն այստեղ, ռուսաստանցիները բավարարվում են *ինստեգրման* շեմային մակարդակով: Նրանք չեն տեսնում ՀՀ հանրության մեջ ավելի խորը *ինստեգրվելու* անհրաժեշտություն, և ստացվում է՝ ոչ թե ընդունող հանրության պահանջն է դրդում նրանց դիրքավորվելու ապագայի ծրագրման նպատակով, այլ՝ Ռուսաստանի պայմանները:

Եզրահանգումներ

Ներգաղթյալները՝ անկախ ելքի երկրից, քիչ են տեղեկացված Հայաստանի մասին: Նրանց պատկերացումները Հայաստանի ու հայ հանրության մասին միջնորդավորված են կամ լրացվում են մոտավոր տեղեկություններով: Դրանք հիմնականում կարծրատիպային են, *սիմվոլիզացված* կամ ընդհանրացված տարածաշրջանային մշակույթների մեջ, ինչի արդյունքում նրանց սպասումներն ու իրականությունը հաճախ չեն համընկնում:

Հնդկաստանցի ներգաղթյալները, որպես կանոն, նախընտրում են կիսել իրենց տարածքը միևնույն պատկանելության անձանց հետ: Արդյունքում նրանց խմբավորումները միտում ունեն ավելի ու ավելի գտվելու սոցիալական բնութագրիչներով: Չնայած դրան, հնդկաստանցի ներգաղթյալներն ունեն «օտար և յուրային»-ի ընկալում՝ լայն հանրության համեմատ: Կարելի է ուրվագծել անկայուն ու դեռևս ոչ այնքան որոշակի սահմաններ հնդկաստանցի ներգաղթյալների ու լայն հանրության միջև, սակայն շատ ավելի հստակ են նրանց սահմանները մնացած ներգաղթյալների հետ:

Հաշվի առնելով զարգացած հնդկական սփյուռքի փորձառությունը և հնդկական հանրության մեջ համայնքային կյանքի ավանդույթները՝ կարող ենք ակնկալել ՀՀ-ում հնդկաստանցի ներգաղթյալների առավել կազմակերպված կենսակերպ: Այդուհանդերձ, հնդկաստանցի ներգաղթյալները դեռևս չեն ձևավորել կազմակերպական կառույցներ, չկա ընդունող երկրի՝ ՀՀ մասին ընդհանուր ընկալում, և որևէ հարցի շուրջ չկա համընդհանուր համաձայնություն: Հետևաբար կարելի է ընդամենը արձանագրել նրանց ինքնակազմակերպական ներուժը և այդ ներուժն իրացնելու *ռեսուրսների* բացակայությունը:

Հայ հանրության մեջ հնդկաստանցի ներգաղթյալներն ունեն հարմարման լավ պատկեր, որը բնութագրվում է առավելապես նրանց զբաղվածությամբ, հանրության մեջ որոշակի դիրքավորմամբ, *կոնֆլիկտների* խիստ նվազ ցուցանիշով ևն: Ըստ նրանց ընկալումների՝ Հայաստանում հնդկաստանցի ներգաղթյալների վիճակը կարելի է նկարագրել «ապահով», «անվտանգ» բառերով: Սակայն *ինստեգրման* հարցում կարելի է նկատել երկկողմանի *դիսպարսիա*:

Եւ՝ ռուսաստանցիների, և՛ հնդկաստանցիների պարագայում, նրանք, ովքեր ունեն բարձրագույն կրթություն և երբևէ ճամփորդել են իրենց ծագման երկրից դուրս, ավելի լայն պատկերացում ունեն ՀՀ-ի մասին և հայկական միջավայրը դասում են երոպական պատկերում՝ համեմատելով այն իրենց երոպական ճամփորդությունների հետ: Սակայն ռուսաստանցիների շրջանում նրանք, ովքեր արտերկրյա զբոսաշրջության փորձ չունեն, ՀՀ-ը տեղավորում են Կովկասի պատկերում:

ՌԴ ներգաղթյալները նշում են, որ ՀՀ-ում հիմնական չեն հաստատվելու, քանի որ այն համարում են տարանցիկ երկիր: Միաժամանակ, նրանց ճնշող մեծամասնությունը համոզված է, որ չի վերադառնա ՌԴ: Շրջաններից եկած ներգաղթյալները Ռուսաստանը համարում են կայսերական կամ ետ-կայսերական երկիր և իրենց պատկերացումները տեղավորում են այդ գաղափարախոսության մեջ: Իսկ մեծ քաղաքների ներկայացուցիչներն ընդունում են, որ ՌԴ-ի կայսերական *խիջը* փուլովել է իրենց պատկերացումներում: Մյուս կողմից՝ ՌԴ խոշոր քաղաքներից եկածները ՀՀ-ը համարում են ետ-գաղութային երկիր և ընկալումների մեջ առաջնորդվում այս դիրքորոշմամբ:

ՀՀ հանրության համար այլազգի ներգաղթյալների ներկայությունը ստեղծում է իրավիճակ, որ կարող է բերել տնտեսական, որոշ չափով էլ՝ ենթամշակութային փոփոխություններ, բայց ոչ ավելի մեծ սոցիալ-մշակութային, ֆինանսատնտեսական կամ քաղաքական-քաղաքացիական փոխակերպումներ: Այստեղ որոշիչ դեր է խաղում այլազգի ներգաղթյալների սոցիալ-մշակութային ինքնաներփակումը:

ՀՀ-ը, իր հերթին, ներգաղթյալների համար չի իրականացրել որևէ հատուկ սոցիալական աջակցության ծրագիր, բացառությամբ աշխատանքի տոնավաճառների: Իսկ իրավական տեսանկյունից ՀՀ-ում էական փոփոխություններ չեն կատարվել, արդյունքում՝ ներգաղթյալների յուրաքանչյուր նոր խումբ նշում է միևնույն խնդիրները, որոնց բախվել է: Աճող ներգաղթի պայմաններում անհրաժեշտ են թիրախավորված մոտեցմամբ *ինստրուցիոնալ* փոփոխություններ՝ սոցիալական հարմարման, *ինսերգրման*, տեղաբաշխման վերաբերյալ, որոնցում կներառվի ներգաղթի նախորդ փորձառության վերլուծությունը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

POGHOSYAN 2023

Poghosyan B.P., How Russian Migration Fuels Armenia's IT Sector Growth // ISPI, 2023 (November 3) <https://www.ispionline.it/en/publication/how-russian-migration-fuels-armenias-it-sector-growth-151311> (ղիտումը՝ 20.03.2024).

Abrahamyan G., The Shifting Real Estate Market // EVN Report համացանցային պարբերական, 2023 (April 26) <https://evnreport.com/economy/the-shifting-real-estate-market/> (ղիտումը՝ 15.02.2024).

Sona A. Nersisyan, Ph.D.

Institute of Archaeology and Ethnography, NAS of RA

EXPERIENCE OF INTEGRATION OF RUSSIAN AND INDIAN IMMIGRANTS IN ARMENIA

Keywords: immigration, foreign immigrant, integration, distribution, social-cultural life.

In recent years, bilateral active movements have been taking place in the Republic of Armenia (RA), first with the participation of Armenians as a result of the COVID-19 pandemic, then as a result of the 44-day war, as well as with the participation of foreigners against the backdrop of various international events, especial-

ly the Russian-Ukrainian war. During this period, an unprecedented flow of foreign immigrants in large groups from Russia, Ukraine, Belarus, as well as Lebanon and other countries has been observed in the RA. They have complemented the existing mosaic of foreign immigrants – such as Indians and Iranians, who had already settled in the RA. It is important to trace how immigrants overcome the stage of primary adaptation, how they integrate into Armenian society, what are the main issues that need to be emphasized when studying this process. As a rule, at the stages of integration, foreign immigrants face various legal, cultural, social-economic problems. From the point of view of environmental influence, it is important to analyze where immigrants settle, in what areas, especially in what parts of settlements, whether they lead a compact or diffuse lifestyle, whether they pool their resources, how they communicate with local residents, etc. This paper attempts to analyze the experience of immigrant integration in the RA, its legal and cultural prerequisites, as well as issues of their placement, in particular, to analyze examples of Russian and Indian immigrants who constitute the largest group.

Сона Араиковна Нерсисян, к.и.н.

Институт археологии и этнографии, НАН РА

ОПЫТ ИНТЕГРАЦИИ РОССИЙСКИХ И ИНДИЙСКИХ ИММИГРАНТОВ В АРМЕНИИ

Ключевые слова: иммиграция, иноэтничный иммигрант, интеграция, размещение, социокультурная жизнь.

В последние годы в Республике Армения (РА) происходят двусторонние активные движения, сначала с участием армян в результате эпидемии COVID-19, затем и в результате 44-дневной войны, а также с участием иностранцев на фоне различных международных событий, особенно российско-украинской войны. В этот период в РА наблюдается беспрецедентный поток иностранных иммигрантов большими группами из России, Украины, Беларуси, а также Ливана и других стран. Иммигрируя, они дополняют мозаику иноэтнических иммигрантов – индийцев, иранцев, уже ранее переехавших в РА. Важно проследить, как иммигранты преодолевают этап первичной адаптации, как они интегрируются в армянское общество, на каких основных вопросах необходимо акцентировать внимание при изучении этого процесса. Как правило, на этапах интеграции иноэтнические иммигранты сталкиваются с различными правовыми, культурными, социально-экономическими проблемами. С точки зрения влияния окружающей среды важно проанализировать, где селятся иммигранты, в каких районах, особенно в каких частях поселений, ведут компактный или диффузный образ жизни, объединяют ли свои ресурсы, как коммуницируют с местными жителями и т.д. В данной работе предпринята попытка осмыслить опыт интеграции иммигрантов в РА, ее правовые и культурные предпосылки, а также вопросы их размещения, в частности проанализировать примеры российских и индийских иммигрантов, составляющих самую большую группу.

Ներկայացվել է՝ 21.03.2025,

գրախոսվել է՝ 07.05.2025,

ընդունվել է՝ 10.07.2025:

ՅԵՂԻՆԱԿՆԵՐ

Ասատրյան Կարեն Սաշայի

Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարանի կրտսեր գիտաշխատող
sardarapat01.22@gmail.com

Արմենյան Գասսիա

Կալիֆորնիայի համալսարանի (UCLA) Ֆաուլերի թանգարանի համադրողական և հետազոտական օգնական, Լոս-Անջելես, ԱՄՆ
gassiaarmenian@gmail.com

Բարսեղյան Սյուզաննա Մոսի

պատմական գիտությունների թեկնածու
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Մփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող
syuzanna.barseghyan@gmail.com

Գալստյան Միհրան Վարդգեսի

պատմական գիտությունների դոկտոր
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի վարիչ / ԵՊՀ Մշակութաբանության ամբիոնի դոցենտ
akoonk@yahoo.com

Զախարկեիչ Ստեփան Արթուրի

պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
 Եւրոպական հումանիտար համալսարան, Վիլնյուս, Լիտվա
stepan.zakharkevich@ehu.lt

Խաչատրյան Նելլի Ռաֆիկի

պատմական գիտությունների թեկնածու
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Մփյուռքի ուսումնասիրության բաժնի գիտաշխատող
nelli.khachaturyan02@gmail.com

Կարապետյան Ռուբեն Սուրենի

պատմական գիտությունների դոկտոր
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Մփյուռքի ուսումնասիրության բաժնի վարիչ
karapetyan.ruben.s@gmail.com

Հակոբյան Գայանե Լևոնի

պատմական գիտությունների թեկնածու
 ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող
gayik20@gmail.com

Հակոբյան Մարիամ Միշայի

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասպիրանտ
mariam-hakobyan-1010@mail.ru

Հարությունյան Մարիամ Բագրատի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի
 Մփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ լաբորանտ
mariamharutyunian96@gmail.com

Ճեպեճեան Հրայր Վահէի

աստուածաբանության դոկտոր

Արաբական ծոցի Աստուածաշունչի ընկերության ընդհանուր քարտուղար, Քուվեյթ
hrayr.jebejian@gmail.com

Մարկոսյան Սալվինէ Հակոբի

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի կրտսեր գիտաշխատող

salvi.markosyan@gmail.com

Մարտիրոսյան Գոռ Մովսեսի

սոցիալական գիտությունների թեկնածու

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի

Աշխատաշուկայի ուսումնասիրման և մասնագիտական կարիերայի կենտրոնի տնօրեն
gormartiros@gmail.com

Ներսիսյան Սոնա Արայիկի

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող

sona.nersisyan2006@gmail.com

Պողոսյան Սվետլանա Հայկի

պատմական գիտությունների թեկնածու

Հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային

թանգարանի փոխտնօրեն / ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Մշակութային մարդաբանության բաժնի ավագ գիտաշխատող

poghosyansvetlana26@aspu.am

Սվազլյան Վերժինե Գառնիկի

բանասիրական գիտությունների դոկտոր

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Բանագիտության բաժնի առաջատար գիտաշխատող,

ՀՀ Գիտության վաստակավոր գործիչ

vsvaz333@yahoo.com

Վարդանյան Հրաժին Վարդանի

պատմական գիտությունների թեկնածու

ԵՊՀ Պատմության ֆակուլտետի ասիստենտ

vardanyan.h@ysu.am

Տանաջյան Լուսինե Ասատուրի

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի

Սփյուռքի ուսումնասիրության բաժնի ավագ գիտաշխատող

lusine.tanajyan@gmail.com

Օհանջանյան Ռուբեն Սամվելի

պատմական գիտությունների թեկնածու

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի Սոցիալական

գործընթացների և ինստիտուտների մարդաբանության բաժնի գիտաշխատող

r.ohanjanyan@mail.ru

CONTENTS

A. RESEARCH PAPERS

I. RA - DIASPORA, RA - ABROAD: MUTUAL CONNECTIONS AND INTERACTIONS

Ruben Karapetyan

On the Migration Ties between the Diaspora and the Republic of Armenia 8

Hratsin Vardanyan

Mariam Hakobyan

The Policy of Identity as a Component of State–Diaspora Cooperation
(the Case of RA–Diaspora Relations) 21

Hrair Jebejian

Relations between the Armenian Communities in the Near East
and the Republic of Armenia: Current Trends, Challenges and Opportunities 34

Gayane Hakobyan

Social-Cultural Life of New Migrants in the Diaspora:
the Viewpoint of Relatives in Armenia 48

Sona Nersisyan

Experience of Integration of Russian and Indian Immigrants in Armenia 59

II. ARMENIAN COMMUNITIES OF EASTERN EUROPE

Stepan Zakharkevich

Culture of Memory of Armenian Communities in Eastern Europe and the Influence
of Historical Policies and National Projects at the Present Stage 72

Svetlana Poghosyan

Sociocultural Features of the Armenian Community of Varna:
Situation, Trends and Developments 89

Gor Martirosyan

Types of Entrepreneurship of Armenian Immigrants in Poland,
Results of the Diversification and Change of Their Activity 103

Lusine Tanajyan

Suzanna Barseghyan

Armenians in Czech Republic: Peculiarities of Community Life 113

III. ARMENIAN COMMUNITY OF THE USA

Mihran Galstyan

The Term "Repatriation" in the Context of Modern Processes of Diaspora:
the Case Study of the Armenian Community of Los Angeles 126

Verjine Svazlian

The Level of Preserving Armenianness among the Armenian-Americans
according to the Inscribed Materials of the Oral Tradition 139

IV. THEORETICAL ISSUES

Nelli Khachaturian

Mariam Harutyunyan

Religious Transmission in the Family: Theoretical Approach 156

Ruben Ohanjanyan

Features of the Application of the Bogardus Social Distance Measurement Scale 167

B. VARIA

V. REPORTS

Karen Asatryan

Certificates of the Educational System of the Armenians of Constantinople
(Late 19th – Early 20th Centuries) 176

Salvine Markosyan

The Role of Weekly Newsletter “Hayastan” in the Cultural Life
of Armenians in Constantinople 183

VI. EXHIBITION

Gassia Armenian

Remain in Light: Visions of Homeland and Diaspora 188

VII. REVIEWS

Tork Dalalyan

Lusine Hayriyan

Anahit Khechoyan

Études arméniennes contemporaines, 2023, N° 15 :
La presse de langue arméniennes en France et la création d’un espace transnational 200

Antranik Dakessian

Haigazian Armenological Review: Four Books of the 43th and 44th Volumes 204

VIII. EVENTS

Suzan Pirnalyan

The 40th Year of Summer Intensive Course of Armenian Language and Culture:
an Armenian World in Venice 218

PHOTOS 221

INFORMATION ABOUT AUTHORS 230

СОДЕРЖАНИЕ

А. ИССЛЕДОВАТЕЛЬСКИЕ СТАТЬИ

I. РА–ДИАСПОРА, РА–ЗАГРАНИЦА: ВЗАИМНЫЕ СВЯЗИ И ВЗАИМОДЕЙСТВИЯ

Рубен Карапетян

О миграционных связях Диаспоры с Республикой Армения 8

Грацин Варданян

Мариам Акопян

Политика идентичности как составляющая сотрудничества государства с диаспорой 21

Грайр Джебебджян

Отношения между армянскими общинами Ближнего Востока и Республикой Армения: современные тенденции, вызовы и возможности 34

Гаяне Акопян

Социально-культурная жизнь новых мигрантов в Диаспоре: точка зрения родственников в Армении 48

Сона Нерсисян

Опыт интеграции российских и индийских иммигрантов в Армении 59

II. АРМЯНСКИЕ ОБЩИНЫ ВОСТОЧНОЙ ЕВРОПЫ

Степан Захаркевич

Культура памяти армянских общин Восточной Европы и влияние на нее исторической политики и национальных проектов в современном этапе 72

Светлана Погосян

Социально-культурные особенности армянской общины Варны: ситуация, тенденции и развития 89

Гор Мартиросян

Виды экономической деятельности армянских иммигрантов в Польше, результаты диверсификации и изменения этих видов деятельности 103

Лусине Танаджян

Сюзанна Барсегян

Армяне в Чешской Республике: особенности общинной жизни 113

III. АРМЯНСКАЯ ОБЩИНА США

Мигран Галстян

Термин «репатриация» в контексте современных процессов Диаспоры: пример армянской общины Лос-Анджелеса 126

Вержине Свазлян

Уровень сохранения армянства у американских армян по материалам устной культуры 139

IV. ТЕОРЕТИЧЕСКИЕ ВОПРОСЫ

Нелли Хачатурян

Мариам Арутюнян

Трансмиссия религиозности в семье: теоретические проблемы 156

Рубен Оганджанян

Особенности применения шкалы Богардуса, измеряющей социальную дистанцию 167

Б. VARIA

V. СООБЩЕНИЯ

Карен Асатрян

Аттестаты системы образования константинопольских армян
(конец 19-го – начало 20-го вв.) 176

Салвине Маркосян

Роль газеты «Айастан» в культурной жизни армян Константинополя 183

VI. ВЫСТАВКА

Кассия Арменян

Да пребудет с вами свет: видения родины и диаспоры 188

VII. РЕЦЕНЗИИ

Торк Далалян

Лусине Айриян

Анаит Хечоян

Études arméniennes contemporaines, 2023, № 15 : Армяноязычная пресса
во Франции и создание транснационального пространства 200

Андраник Дакесян

Haigazian Armenological Review: Четыре книги 43-го и 44-го томов 204

VIII. СОБЫТИЯ

Сюзан Пырнялян

40 лет интенсивного летнего курса армянского языка и культуры:
армянский мир в Венеции 218

ФОТОГРАФИИ

221

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

230

ՀԱՊԻՏՈՒԹՅԱՆ
ԵՒ
ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏԻ
ԱԾԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
7

անգլերենի խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Անահիտ Խեչոյան
ռուսերենի խմբագիր՝ Նելլի Խաչատուրյան
տեխնիկական խմբագիրներ՝ Լուսինե Տանաջյան
Սյուզաննա Բարսեղյան
Սալվինե Մարկոսյան
ձևավորող և էջադրող՝ Արթուր Հարությունյան

Շապիկի վրա՝

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի (Վենետիկ) պատկերով բացիկ՝
Քարոլ Մարք-Բուարե Գաֆտանճյանի ընտանեկան արխիվից (Ֆրանսիա):

